ՆԱԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

«______» _______________ 2022թ. N -Ն

# ՈՐՈՇՈՒՄ

## ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 498-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով.

**Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

1. Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի «Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման 2022 թվականի ծրագրի վերաբերյալ» N 498-Ն որոշման հաստատված ծրագրի 6-րդ գլուխը լրացնել նոր 26-55-րդ կետերով՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐ. ՍԱՐԳՍՅԱՆ**

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք – Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ու Մ**

**«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 498-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

| | |
|---|---|
| 1 | **Խնդրի սահմանումը** |
| | «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի համաձայն՝ Երևան քաղաքի ավագանին որոշում է ընդունում Երևանի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման տարեկան ծրագրի վերաբերյալ, որում նշված են օգտագործման տրամադրման կամ օտարման եղանակը, ժամկետները, նպատակը, օգտագործման տրամադրման դեպքում՝ օգտագործման ժամկետը և վճարի չափը, ուղղակի վաճառքի դեպքում՝ վաճառքի գինը, իսկ հրապարակային սակարկությունների դեպքում՝ մեկնարկային գինը, ընդ որում՝ հողամասերի օտարման տարեկան ծրագրի մեջ պետք է նշվեն նաև հողամասերի գտնվելու վայրը, ծածկագրերը, Երևանի գլխավոր հատակագծով սահմանված նպատակները և օտարման եղանակները: |
| 2 | **Առկա իրավիճակը** |
| | Երևան քաղաքի ավագանու մի շարք որոշումներով արդեն իսկ հաստատվել են օգտագործման տրամադրման և օտարման համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի ցանկեր: Երևանի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի N 498-Ն որոշման հավելվածի 44-րդ կետով 2022 թվականին օտարման և (կամ) օգտագործման տրամադրման համար առաջարկվող գույքի կազմում ներառվել են Երևան քաղաքի ավագանու որոշումներով հաստատված Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2010-2021 թվականների ծրագրերում ընդգրկված, սակայն դեռևս չօտարված Երևան համայնքին սեփականության իրավունքով պատկանող գույքը և հողամասերը: Միաժամանակ ցանկում չներառված հողամասերի ծածկագրերը հնարավորություն չեն տալիս անհրաժեշտության դեպքում այն օգտագործման տրամադրել կամ օտարել: |
| | **Կարգավորման նպատակը** |

| | |
|---|---|
| | Նախագծով Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի N 498-Ն որոշման հավելվածում կատարվող փոփոխությունը և լրացումները նպատակ են հետապնդում հստակեցնել Երևանի քաղաքապետի և Երևան քաղաքի ավագանու լիազորությունը, ինչպես նաև 2022 թվականի օգտագործման տրամադրման և օտարման համար առաջարկվող հողամասերի ցանկը լրացվում է նոր միավորներով: |
| | **Ակնկալվող արդյունքը** |
| | Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի N 498-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու արդյունքում կհստակեցվեն Երևանի տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները, Երևանի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման տարեկան ծրագրում կներառվեն դեռևս չօտարված և օգտագործման չտրամադրված Երևան համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասերը, որոնց օգտագործման տրամադրման և օտարման արդյունքում կավելանա Երևան համայնքի բյուջեի մուտքերը:<br>Որոշման ընդունումը նպատակաուղղված է համայնքային գույքի հետագա օգտագործման արդյունավետության բարձրացմանը: |
| | **Նորմատիվ բնույթի հիմնավորվածությունը** |
| | «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտում փոփոխություն կամ լրացում կարող է կատարել միայն նույն տեսակի և բնույթի նորմատիվ իրավական ակտով: |

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐ. ՍԱՐԳՍՅԱՆ**

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

**«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 498-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի N 498-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չկա:

**«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 498-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի N 498-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում եկամուտների և ծախսերի էական փոփոխություններ չեն նախատեսվում:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐ. ՍԱՐԳՍՅԱՆ**

Հավելված
Երևանի քաղաքի ավագանու
«______»      ________________2022թ.
N _________-Ն  որոշման

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 26 | Աջափնյակ | 01-001-108-325 | Բնակավայրերի | Հասարակական կառուցապատման | Գ.Չաուշի փողոցի h.11/1 | |
| 27 | Աջափնյակ | 01-001-345-041 | Բնակավայրերի | Բնակելի կառուցապատման | Թերլեմեզյան փողոցի h.10/4 | |
| 28 | Աջափնյակ | 01-001-0120-0003 | Բնակավայրերի | Խառը կառուցապատման | Նազարբեկյան փողոցի h.43/1 | |
| 29 | Աջափնյակ | 01-001-0450-0246 | Բնակավայրերի | Հասարակական կառուցապատման | Գ-1 թաղամասի h.42/3 և h.8/40 հողամասերին կից | |
| 30 | Էրեբունի | 01-005-223-001 | Բնակավայրերի | Խառը կառուցապատման | Արցախի փողոցի h.8/13 | |
| 31 | Էրեբունի | 01-005-555-079 | Բնակավայրերի | Հասարակական կառուցապատման | Խաղաղ Դոնի փողոցի h.16/4 | |
| 32 | Կենտրոն | 01-006-208-002 | Բնակավայրերի | Խառը կառուցապատման | 33-րդ թաղամաս | |
| 33 | Կենտրոն | 01-006-208-005 | Բնակավայրերի | Խառը կառուցապատման | 33-րդ թաղամաս | |
| 34 | Կենտրոն | 01-006-208-006 | Բնակավայրերի | Խառը կառուցապատման | 33-րդ թաղամաս | |
| 35 | Կենտրոն | 01-006-208-010 | Բնակավայրերի | Խառը կառուցապատման | 33-րդ թաղամաս | |
| 36 | Կենտրոն | 01-006-208-012 | Բնակավայրերի | Խառը կառուցապատման | 33-րդ թաղամաս | |
| 37 | Կենտրոն | 01-006-208-013 | Բնակավայրերի | Խառը կառուցապատման | 33-րդ թաղամաս | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 38 | Կենտրոն | 01-006-208-014 | Բնակավայրերի | Խառը կառուցապատման | 33-րդ թաղամաս | |
| 39 | Կենտրոն | 01-006-208-015 | Բնակավայրերի | Խառը կառուցապատման | 33-րդ թաղամաս | |
| 40 | Կենտրոն | 01-006-208-049 | Բնակավայրերի | Խառը կառուցապատման | 33-րդ թաղամաս | |
| 41 | Կենտրոն | 01-006-208-060 | Բնակավայրերի | Խառը կառուցապատման | 33-րդ թաղամաս | |
| 42 | Կենտրոն | 01-006-208-063 | Բնակավայրերի | Խառը կառուցապատման | 33-րդ թաղամաս | |
| 43 | Կենտրոն | 01-006-208-066 | Բնակավայրերի | Խառը կառուցապատման | 33-րդ թաղամաս | |
| 44 | Կենտրոն | 01-006-208-102 | Բնակավայրերի | Խառը կառուցապատման | 33-րդ թաղամաս | |
| 45 | Կենտրոն | 01-006-208-103 | Բնակավայրերի | Խառը կառուցապատման | 33-րդ թաղամաս | |
| 46 | Կենտրոն | 01-006-208-140 | Բնակավայրերի | Խառը կառուցապատման | 33-րդ թաղամաս | |
| 47 | Կենտրոն | 01-006-208-150 | Բնակավայրերի | Խառը կառուցապատման | 33-րդ թաղամաս | |
| 48 | Կենտրոն | 01-006-247-069 | Բնակավայրերի | Խառը կառուցապատման | Մ.Խորենացու 4-րդ նրբանցքի հ.35 | |
| 49 | Քանաքեռ-Զեյթուն | 01-012-228-029 | Բնակավայրերի | Խառը կառուցապատման | Ռուբինյանց փողոցի հ.42/3 | |
| 50 | Քանաքեռ-Զեյթուն | 01-012-233-054 | Բնակավայրերի | Բնակելի կառուցապատման | Գոգոլի փողոցի հ.26/24 | |
| 51 | Քանաքեռ-Զեյթուն | 01-012-323-001 | Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության | Արդյունաբերական օբյեկտների | Կ.Ուլնեցու փողոցի հ.58/3 և հ.58/5 հասցեների միջանկյալ հատվածում | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 52 | Քանաքեռ-Զեյթուն | 01-012-0114-0058 | Բնակավայրերի | Բնակելի կառուցապատման | Քանաքեռ 2-րդ փողոց h. 63/2 և h.65/5 | |
| 53 | Նորք-Մարաշ | 01-009-1149-001 | Բնակավայրերի | Բնակելի կառուցապատման | Ամառանոցային փողոց h.73 և 73/2 | |
| 54 | Շենգավիթ | 01-011-399-061 | Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության | Արդյունաբերական օբյեկտների | Արշակունյաց պողոտա 127/61 | |
| 55 | Մալաթիա-Սեբաստիա | 01-007-060-021 | Բնակավայրերի | Բնակելի կառուցապատման | Հաղթանակի 8-րդ փողոց h.15 | |